Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ ԹԻՎ 73-Ա, 77-Ա, 80-Ա, 82-Ա-86-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 73-Ա որոշումը հիմնավորված չէ:

Թիվ 77-Ա որոշումը չի համապատասխանում հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, համաձայն որի՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները:

Թիվ 80-Ա որոշման հավելվածում անհրաժեշտ էր գրառել նաև «Հավելված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 205-Ա որոշման» բառերն ու թվերը, իսկ «Ավտոտնակների համար» բառերից առաջ գրառված «1» թիվը անհրաժեշտ է փոխարինել «2» թվով:

Թիվ 82-Ա որոշման 1-6-րդ կետերում «տողի» բառը անհրաժեշտ է փոխարինել «կետում» բառով: Բացի այդ, որոշման 5-րդ կետով փոփոխություն է կատարվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի N 203-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետում՝ փոփոխվել է Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասի գտնվելու վայրը, սակայն հաստատված մեկնարկային գինը չի փոփոխվել:

Թիվ 83-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում բովանդակությանը: Բացի այդ, հղումը «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածին թերի է կատարված:

Թիվ 84-Ա, 85-Ա և 86-Ա որոշումների մեջ «պետհամարանիշի» բառը անհրաժեշտ է փոխարինել «հաշվառման համարանիշով» բառերով:

18.05.2021թ.